Երկ. ազ Զրաղանի պալատը պարտած ժամանակ զարձեալ երկարօրէն խօսակցեցաւ ճարտարապետ պէյերուն հետ, և անոնց ճարտարութեանն ու գեղարուեստական փափուկ և կիրթ ճաշակը գովելով տաճկական բաղնիքի մը ծրագիրը խնդրեց Յակոբ պէյէն։ Մասիս օրաթ. թիւ 435։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ

ՅՕՐԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՍԻՆՕԴԻ

Օգոստ. 29։—Շամախւոյ վիճակին Օանկեսարան գեղջ Եկեղեցւոյ Յովհաննէս քահանայ Փիրբուղաղեանց՝ նախ՝ հակառակ Եկեղեցական կանոնացն արգելեալ աւուրց մէջ, երկրորդ՝ ընդդէմ յօժարութեան օրիորդին խօսակցելոյ՝ պատկի խորհուրդ կատարելոյ տղադաւ՝ յիշեալ Եկեղեցւոյ դուռը առանց փիլոնի՝ վեցամսեայ ապաշխարանաց ենթարկեցաւ 'ի քաւութիւն ծանրակշիռ յանցանացն և 'ի զգուշութիւն առ յապայն։

Սեպտ. 19։—Սեւանայ Ընտպատի վանահայր Երց. Յարութիւն վարդապետն Մէրճանեանց ըստ խնդրանացն՝ արձակեցաւ վանահայրութեան պաշտօնէն յիշեալ Ընտպատի, և 'ի տեղի նորին կարգեցաւ Երց. Կարապետ վարդապետն Պիւլպիւլեան՝ պարտաւորելով միանգամայն ընդ փոյթ (համաձայն կանոնաց վանական դպրոցաց) մի ուսումնարան հաստատել յիշեալ վանուց մէջ և նշանակել արժանաւոր մի ուսուցիչ։

Սեպտ. 17։— Համաձայն յայտարարութեան փոխ.—թեմական Երևանայ և ըստ ընտրութեան և խնդրանաց ժողովրդեան 'Նորաշէն գեղջ՝ Պարոնայք Մարդարէ Մելիք 'Նազարեան, Յարութիւն Տէր Մկրտչեան Տէր Յովհաննէսեանց, Պետրոս մահտեսի Բարսեղեան, և նոցին օգնականք՝ Վարդան Խաչիկեան, Աւագ Տէր Վարդանեանց և Բարսեղ Հաղբատեանց, յիշեալ գեղջ Եկեղեցական դպրոցին հոգաբարձութեան պաշտօնին մէջ հաստատուեցան՝ Վերատեսուչ ունենալով ինքեանց բարեկրօն Սահմանոս քահանայն իւրեանց Եկեղեցւոյ։

'Նոյնպէս՝ պարոնայք Սահմանոս Յակոբեան և Վարդան Մինասեան՝ խնամակալք գեղջ Եկեղեցական դպրոցին Հոգաբարձութեան պաշտօնին մէջ հաստատուեցան։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ՎԱՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ։

Յօդուածս վերնագիրը մեր ընթերցողաց մի քանիսի աչքին որ ընկնի՝ նախ և առաջ՝ պիտի զարմացնէ հարցնելն. «Այս ի՞նչ բան է. մի կողմից ուսումնարաններ են հիմնւում, ամենայն կիրպ հրաւիրւում ժողովրդի համակրութիւնը դէպի այս հիմնարկութիւնքը. միւս կողմանէ՝ գրւում են և հրատարակւում այդ իսկ հիմնադրութիւնների վնասակար ազդեցութեանց մասին. ժողովուրդը ի՞նչ պիտի կարծէ»։— Այդպիսի ընթերցողաց մենք կը պատասխանենք թէ՝ ժողովուրդը մի զորձի որ ձեռնամուխ է լինում կամ հրաւիրում նպաստաւորութեան,

պէտք է նախ՝ գիտենայ այդ ձեռնարկութեան լաւն ու վատը՝ հանգամանօրէն և ամենայն մանրամասնութեամբ։ Եւ ընդ հակառակը՝ եթէ մի որ և իցէ հասարակական ձեռնարկութիւն բարգաւաճման չէ քննուած ու հասարակաց գիտակցութեանը հասցրած, նորա գործադրութիւնը հարիւր թերի և անկատար կ'լինի և վաղ թէ՝ ուշ զանազան վատ հետևանքներ կը յառաջացնէ, իւր բուն նպատակին շեղուելով։ Եւ դարձեալ՝ երբեմն պատասխան մի այլ կողմանէ այստեղ մէջ բերենք մի յայտնի երևելի հասարակախօսի ասածը թէ՝ «Ամենայն բարենպատակ կարգադրութիւն կամ հասատատութիւն կարող է ապագայում վատ հետևանքներ յառաջ բերել հանգամանաց բարդուելուցը։ Սակայն դորանից չը պէտք է հետևցնել թէ՝ 'ի բնէ բարի բանէն չար բան կարող է ծնիլ։ Ո՛չ այդ կը նշանակէ միայն՝ բարի նպատակի գործադրութիւնը սխալ կերպիւ ենք կատարում մենք ինքներս, մանաւանդ միակողմանի»։ Առաջիկայ մտքերը վերաբերելով ուսումնարանին՝ երևակայենք թէ՝ մի քաղաքում կամ մի վանքի մօտ փարժարան պիտի կառուցանուի։ Դուք խոստում էք ժողովրդի առատ նուիրատուութիւնը, ասում էք՝ որ փարժարանի շէնքը արձակ պէտք է լինի, բարձրայարկ, մեծ և պայծառ լուսամուտներով, տաքութեան և օդամուտ բութեան վիճակը լաւ հոգեներով և հողմահարներով ապահոված, երեխայից դեռաբողջոյ կազմուածքին և երկարատև պարապմանց յարմարցրած նստարաններ, վերջապէս հեղաբարոյ և երախայասէր ուսուցիչներ են հարիւրաւոր,— այս և սոյա նման ձեր շատ արդարացի պահանջները ժողովուրդը զանց կ'առնու և կ'աշխատի՝ երբան կարելի է էժան պրծնել ձեր ուսումնարանէն և մի օր կը տեսնէք որ երեխայքս ձեռը մի մի փաթաս առած ուզարկում է՝ որ ծալապատկի նստեն ու իրանց համար «ոյրոյր, բեռ-բեռ» դուռան։ Ի՞նչու. կարծում էք թէ միայն չքաւորութիւնն է ժողովրդի այսպիսի դժկամակութեան պատճառը։ Ո՛չ. դուք նորան չ'հասկացրիք ձեր առաջարկութեանց կարևորութիւնը, դուք վաղ ժամանակով հոդ չը տարաք ժողովրդին ապացուցանել Ուսումնարանի այժմեան պարագայից թերութիւնքը և դոցա վնասակար ազդեցութիւնքը մեր մատաղհաս մանկուց վրայ։ Ուրեմն՝ մեղաւորը ժողովուրդը չէ, որ կարծում է թէ՝ «հին ձևով էլ կարելի է եօլայ գնալ». մեղաւորը դուք էք, մենք ենք՝ գիտցող համարուածներս և մեր մի կտոր ունեցած տեղեկութիւնները ժողովրդէն թաղուցանողներս։ Թող կրկնուի և դարձեալ կրկնուի թէ՝ ուսումնարանի նպատակն է կատարեալ մարդիք պատրաստելը՝ ոչ միայն բարոյապէս և մտաւորապէս, այլ և ֆիզիքապէս, թէ՝ առանց հոգատարութեան երեխայից առողջութեանը և ֆիզիքական դաստիարակութեանը՝ միշտ թերի պիտի մնայ մեր սերնդոյ մտքի լիակատար զարգացումը, որովհետև ամենասերտ կապերով կապուած են այդ երկու բաները, և ուսումնարանը չունի իրաւունք բաժան նայելու դոցա վրայ։ Թող ոչ ոք չը վախենայ և դանդաղի ցոյց տալու ժողովրդին Ուսումնարանի զանցառութիւնքը այդ կողմանէ։ Մ՝եր ժողովուրդը արդէն լաւ ճանաչում է թէ՝ «առանց ուսումնարանաց չ'ենք մեղ փրկութիւն»— դորան ապացոյց են այն օրհնութիւնքը, որ կարդում է ժողովուրդը այժմ ամեն բերան՝ մեր Ս. Հարսաւ Կաթողիկոսի ուսումնարանաշէն ջանքերը։ Լսկ մեր «ուսումնարանի վնաս, ուսումնա-

բանի ընթրիք, մեղք» ասածները նա կը հաստատեց այնպէս, որպէս հարկն է և կ'ընդունի դոցա իբրև հրաւէր նորոգութեան և ոչ ամբաստանութիւն իսկական ուսումնարանի վրայ: Ուրեմն ապահով լինենք և չը տարակուսինք այդ կողմանէ:

Հոգւով կը ցաւինք՝ որ մենք այժմ անկարող ենք և անպատրաստ՝ մեր հաստատութեան առաջը դնել իսկ հայկական ուսումնարանաց. ուղղութեան վերաբերեալ զանցառութիւնքը, ուր մնայ՝ մի գործնական առողջապահութեան հրահանգ մեր ուսումնարանաց պարտականներին յարմարացրած՝ ներկայացնելը: Դորա համար մեծ փորձ է հարկաւոր և վիճակագրութիւն: Ո՞ւր են մեր հայ բժիշկները. հաւաքել են արդեօք մի որ և է վիճակագրական տեղեկութիւն, վերաբերեալ այն նահանգին կամ քաղաքին, ուր նոքա ամբողջ տարիներ են անցուցանում. տեղական ուսումնարանքը գրաւել են մի օր դոցա ուշքը առողջապահական դիտմամբ: Ո՞ւր է այն կենդրոնը (Էջմիածի՞ն է արդեօք), որտեղ դոքա ուղարկեցին իւրեանց թոռ մանր և փոքրատիպ վիճակահաշիւները՞... Ո՛չ այս, ոչ այն և ոչ երրորդը՞. կը մնար մեզ դիմել դարձեալ Եւրոպայի բարմադիրձութեանը, ուր միւս կողմանէ՝ Ուսումնարանը 'ի վաղուց արդէն այնքան բարմաճիւղ արմատ ու ոստեր է արձակել, որ նորա յառաջ բերած հեռաւանքները առաւել զարգ նկատելի են նոցել շատերին և ակներև: Գուցէ այդ փորձերէն համոզուէինք և մենք ինքներս ուշադիր լինէինք ուսումնարանի առողջապահութեանը և դդուշանայինք մի քանի վնասակար հանգամանքներէն՝ հոգ տանելով դոցա փոփոխութեանը: Բայց պէտք է ասել, որ Եւրոպացումն ևս առողջապահութեան հարցը դեռ ևս շատ վիճաբանութեանց նիւթ է և մեծ զգուշութիւն է հարկաւոր՝ զանազան աղբիւրներէ այս կամ այն վերջնական եզրակացութիւնը ընդունելու համար: Ուստի պէտք էր մեզ այնպիսի մի հեղինակի դիմել՝ որոյ քննութեանց ճշդութեանը միանգամայն վստահ լինէինք: Ահա այսպիսի հեղինակութիւն մեզ համար ընտրեցինք Բեռլինու պրոֆեսսոր բարմադիրձ Ֆիրխովը, որը վաղուց արդէն երևելի է ամբողջ Եւրոպայի մէջ, իբրև անաչառ քննադատ բժշկականութեան լայն ասպարիզի մէջ: Սորա յօդուածը թէև համառօտախօս, բայց ազդու և համոզեցուցիչ երևայ մեզ:

Սկսեալ անցեալ դարու վերջին տարիքից թէ՛ բժիշկներ և թէ՛ զանազան դասակարգներ սկսեցին այս և այն կողմանէ ուշադիր և հետամուտ լինել Ուսումնարանի վնասակար ազդեցութեանցը՝ աշակերտաց առողջութեան նկատմամբ: Սակայն ամեն անգամ այս կարևոր հարցը չէր ենթարկվում ճիշդ և իրաւ դիտական հետազօտութեանց ներքոյ: Եոյն իսկ Լ. օրինչերի յօդուածը տպագրեալ Պրուսական Բժշկական Ընկերութեան Օրագրի 1836 թ. № 1 (*), թէև բարմադիր ուշադրութիւնը դրաւեց և շատերի վրայ մեծ ազդեցութիւն ունեցաւ, բայց պէտք է խոստովանել որ նորա ասածներն ևս՝ կարճատեսութեան, փոքրի խնայողաց, բարակոցաբի և այլ հիւանդութեանց դիտմամբ, որք իբրև թէ տարածուած էին միջին ուսումնականների աշակերտաց մէջ, դարձեալ անորոշ են և իսկական վիճակագրական հիմն չունին: Ուստի

(*) Այս յօդուածն ևս կաշխատենք հաղորդել մեր ընթերցողաց ի դէպ ժամանակի:

և նորա հակառակորդները, որպէս էր Էրեր-մայերը և այլք, կալողացան նորա դէմ հակադառել նոյն Օրադրի մէջ, նոյնպէս թոյլ և աւելի անորոշ հիմքեր յառաջ բերելով։ Առ հասարակ, այս հարցի վերաբերութեամբ քանի մի ընդհանուր փաստեր և դրութիւնք, որք ակներև էին թուում ուսումնականաց շատերին, փոքր առ փոքր տարածուեցին և՝ ժողովրդի մէջ և՝ գրքերի։ Բայց մինը որ հարցնէր այդ փաստերի ներքին հիմունքը կամ արտաքին ապացոյցները՝ միշտ թերի և անկատար պատասխան կ'ստանար։ Հաղիւ երբեմն պատահել է այս կամ այն փորձը՝ այդ հարցի քննութիւնը ճշդիւ իրական փաստերի վրայ հիմնելու. և հիմայ մեծ յառաջադիմութիւն պէտք է համարենք, որ առանձին ուղղութիւններով Ուսումնարանի վիճակագրութեան սկիզբը դրուած կը տեսնենք. ի՞նչ նիւթ գլխաւորապէս պէտք է ներկայացնէ մեզ այդ վիճակագրութիւնը։ Այն, ինչ որ կարելի էր անուանել «զանցառութիւնք ուսումնարանի և ուսումնարանական տկարութիւնք»։

Մինչև այսպիսի մանրամասն, ճիշդ քննական և բաղդատական վիճակագրութիւնը կարող է վերջապէս վճռել մեր հարցը՝ թէ ի՞նչ շարիք կամ ի՞նչ հիւանդութիւնք է յառաջ բերում ուսումնարանը, և ի՞նչպիսի հնարներով կարելի է զերծանել դոցանից։

Իսկ օրտեղ որ պակասել է այդպիսի մի քննական յենարան, այժմեան զիտնականք հարկաւ զիմել են առողջապահական ընդհանուր կանոններին, որոնք կը վերաբերին ոչ միայն ուսումնարանաց, այլ ամենայն հասարակաբնակ հաստատութեանց, և կամեցել են նոցա միջնորդութեամբ հարցերը վճռել։ Բայց չը պէտք է ուրանալ թէ՝ այդ կերպ կարելի էր ուսումնարանին վերագրել այնպիսի շարիք, որ ուսումնարանին չէ վերաբերում և ընդհակառակը՝ մոռանալ այնպիսի տկարութիւնք, որ իսկ ուսումնարանի պատուղն են և ծնունդը։

Ուստի յետագայ յօդուածիս մէջ կ'աշխատեմ զտել և որոշակի բաժանել մեր ունեցած տեղեկութիւնները երկու դաս. մինը՝ էրոլաչէս ապացոյցած շարիք ուսումնարանի, և միւսը՝ կարծեցեալ դեպքեր։

Ընդարձակ՝ ուսումնարանի դեղն է ամենից աղագաչ։

1. ԱՉԳԱՑԱՒԻ ԵՒ ԿԱՐՃԱՏԵՍՈՒԹԵԱՆ ՏԱՐԱԾՈՒԵԼԸ։

Առաջին, թէև շատ թոյլ փորձը ուսումնարանի վերաբերեալ աղդեցութիւնը ցոյց տալու, նա մանաւանդ տեսութեան զգայարանքի վրայ՝ կը պատկանի այս դարուս սկիզբներում Ենդղենայի Ուէլրին, որ կամէր վիճակագրական կերպիւ այդ ապացուցանել։ Յետոյ՝ թէ՝ Գերմանիայում և թէ՝ այլ տէրութեանց մէջ մասնաւոր անձինք և երբեմն կառավարութեան հրամանաւ՝ շատ մի վիճակագրական տեղեկութիւններ սկսեցին հաւաքել այդ հարցի վերաբերութեամբ. բայց դժբաղդաբար այսպիսի տեղեկութիւնները միշտ ընդհանրում էին և անկանոն կերպիւ կատարվում, հետևաբար և ոչ մի հիմնաւոր եզրակացութիւն չէր կարելի մակաբերել դոցանից։ Գ. Երջապէս Բրեսլաւլեցի Գոքտոր Գերման Գոնը առաջինն եղաւ, որ այս առարկայի նկատմամբ սկսեց իւր ամենաճիշդ հետազօտութիւնքը, որոնք միանդամայն համապատասխան են արդի դիտութեան պահանջներին՝ թէ՝ նորա ձեռք բերած աշխատակիցների թուովը և թէ՝ դիտողութեանց անշփոթ մեթոդայնովն։ Ուստի սորա դիտողութիւնքը շատ կարևոր հա-

մարուելու են և մինչև անգամ բոլորովին չատոզական նշանակութիւն կարող են ունենալ այս հարցի մէջ։ Կօնի աշխատութեան հիմն են կազմում այն հետևանքները, որ նա դուրս է բերել իւր իրաւի բազմակողմանի փորձերէն և դիտողութիւններէն՝ զանազան ուսումնարանների աշակերտաց վրայօք։ Թող աւելորդ չը համարուի, այստեղ մէջ բերելու թէ՝ որքան և որպիսի արդիւնք ուսումնարաններ այդ քննութեանց նիւթ են եղել.

5 Գիւղական ուսումնարան Լանգերիլի.
20 Սկզբնական կամ ծխական ուսումնարան
2 Օրիորդաց բարձր ուսումնարան.
2 Միջին ուսումնարան.
2 Գործնական ուսումնարան. վերջապէս
2 Գիմնազիօն Բրեսլաւում։

Գիտեալ աշակերտաց թիւը հասել է 10660-ի որոնցից 6059-ին անմիջապէս զննել է ինքը Կօնը, մնացածը — փարժապետները՝ նորա ցոյց տուածով և խրատովը։ Վերջերումս Կօնը դարձեալ զննել էր 410 Համալսարանի ուսանողաց աչքը։

Մի և նոյն ժամանակ՝ Կօնը ամեն անգամ նշանակում էր աշակերտաց հասակը, նոցա որքան ժամանակ ուսումնարանում լինելը, ուսումնարանի շէնքը և տեղագրութիւնը, և հաշուի տակ էր առնում աչքացաւի յարաբերութիւնը այս ամեն մի պարագայից։ Այս կերպ՝ վերջապէս այնքան թանկագին թուեր հաւաքեց՝ որ նոցանից դուրս բերած հետևանքի ճշմարտութիւնը կարելի է միանգամայն վստահ լինել։

Ահա ընդհանուր եզրակացութիւնը այդ թուերից՝ 10060 աշակերտաց մէջ հարիւրին 17·1-ն կամ հազարին 171-ը բ—ակոնին տրրէն խանգարուած պեսոլի-ն ունէին։

Կօնի հաւաքած թուերը մի առ մի այստեղ յառաջ բերելը աւելորդ է. մի գուցէ յետագայ մի քանի թուերն անգամ ձանձրացնեն մեր ընթերցողաց շատերին։ Բայց մինչ ասած, երբ հարցն այնքան կարևոր է որ մեծ զգուշութիւն է պէտք և ցանկալի էր որ ընթերցողը ինքը իւր սեփական աչքովը համոզուէր այդ թուերի մինչ կերպ փոփոխուելուն։ Ահա ուրեմն՝ առաջիկայ ղեկուցուր եզրակացութեան մի քանի մանրամասն կողմերը.

Ինչպիսի ուսումնարանք		Քանի աշակերտաց աչքեր փորր ի շատէ խանգարուած էին
Գիւղական ուսումնարան.	հարիւրին	5·2
Քաղաքական սկզբ.	,,	,, 14·7
Միջին	,,	,, 19·2
Օրիորդաց բարձր	,,	,, 21·9
Գործնական	,,	,, 24·1
Գիմնազիօններում		,, 31·7

Համալսարանների 410 ուսանողաց մէջ առողջ և բնական տեսութեան ուժից զուրկ էին մինչև անգամ հարիւրին 68.

Այս վերջին թիւը չարչաքէ հաշուի մէջ ձգել. որովհետև կասկած է ուրիշ ևս շատ հանգամանքներից։

Այս աղիւսակից շատ պարզ երևում է թէ քանի բարձրանում և մեծանում է ուսումնարանը, նոյնքան համեմատ բազմանում և աւելանում է աչքացաւը աշակերտաց մէջ. կամ ուրիշ խօսքերով ասենք, քանի աշակերտը ներքին ուսումնարաններից բարձր է գնում, նոյնքան առաւել նա ենթարկուած է աչքացաւերի։

Թողնենք հիմայ միւս աչքացաւերը միասին, և առնենք միայն կարճատեսութիւնը՝ այստեղ ևս նոյն ողբալի հետևանքն ենք տեսնում, այն է թէ՝ ամբողջի

մէջ հարիւրին փոքր աշակերտ կարճատես են.

Զանազան ուսումնարաններում	Անոնց ինչպէս է բաժանուած Կարճատեսաց Թիւը	
Գիւղական ուսումնարան.	հարիւրին	1,4
Քաղաք. սկզբ. ,,	,,	6,7
Օրիորդաց բարձր ,,	,,	7,7
Միջին ,,	,,	10,3
Գործնական ,,	,,	19,7
Գիմնազիաներում	,,	26,2

Ամենայն. Ուսան. մէջ մինչև անգամ 60%.

Եթէ հաշուի տակ առնունք միայն քաղաքական ուսումնարանները այն ժամանակ տոկոսիքը աւելի կը մեծանայ՝ այն է, հարիւրին 14,1 կարճատես:

Այս վիճակն ազիւ ազգի մէջ ամենը պարզապէս կարող է նկատել, կան թուերի կանոնաւոր և համեմատական ածումը: Այդ ածումն առաւել ակներև կը լինի եթէ մենք մի որ և է ուսումնարանի առանձին դասարանները իրարու համեմատելու հետ լինինք:

Այսպէս յառաջ բերենք միայն

Դասարանները

Քաղաքական սկզբնական ուսումնարանների

I	II	III	IV	V	VI
—	—	2,9%	4,1%	9,8%	9,8%
		Գիմնազիաներում			
12,5%	18,2%	23,7%	31%	41,3%	55,8%

Այս թուերն ևս ակներև ցոյց են տալիս թէ՝ դասարանից բարձրանալու հետ՝ աճումն է և կարճատեսութիւնը աշակերտաց մէջ: Ուստի Դոքտոր Կոնը բոլորովին իրաւացի հրաւիրում է ծնողաց և ուսուցչաց ուշադրութիւնը ուսումնարանի վնասակար ազդեցութեան վրայ կարճատեսութեան նկատմամբ, որը ածելով բաղմանում է և յարատևելով աւաւել սաստիկ անսութեան խանգարումն պիտի պատճառէ իւրաքանչիւր անհատի համար: Ուրեմն առաջին ջանիւք և հոգատարութեամբ պէտք է դրա առաջը առնուի: Այսինքն՝ երեխայքն ոչ միանգամայն աղօթ լուսաւոր չը պէտք է կարդացնել տալ, մանաւանդ աղաշաց փիլը և հանդերձները, որ լաւ էր բոլորովին անհետանային երեխայի աչքերէն. նոյնպէս ամենեին պէտք է արգիլել կարդալու ժամանակ՝ ձեռքը կոաց և գլուխը կոր ածած նստելը, այս բոլոր վնասակար հանգամանքները մենք նկատում ենք միշտ երեխայի տեսական պա-

քանչելի ան հատի համար: Ուրեմն առաջին ջանիւք և հոգատարութեամբ պէտք է դրա առաջը առնուի: Այսինքն՝ երեխայքն ոչ միանգամայն աղօթ լուսաւոր չը պէտք է կարդացնել տալ, մանաւանդ աղաշաց փիլը և հանդերձները, որ լաւ էր բոլորովին անհետանային երեխայի աչքերէն. նոյնպէս ամենեին պէտք է արգիլել կարդալու ժամանակ՝ ձեռքը կոաց և գլուխը կոր ածած նստելը, այս բոլոր վնասակար հանգամանքները մենք նկատում ենք միշտ երեխայի տեսական պա-

բացատրեց ժամանակին։ Պէտք է խոստովանել միայն, որ տունը հարկաւ փոխ է առնում այդ պարագաները դարձեալ ուսումնարանին։ Եւ ուսումնարանը ոչ թէ աշխատում է իւր անուշադրութիւնը միանգամայն վերացնել և հետևիլ առողջապահական կանոններին, այլ և ինքը վառ օրինակ է տալի այդ կողմանէ։

Դոքտոր Գ՝ օնը բացի այն, որ կրկին և կրկին խրատում է ժողովրդին՝ ուսումնարան կառուցանելիս միշտ միտք դարձնել լուսամուտների մեծութեանը և քանակութեանը, այնպէս որ սենեակները պայծառ և լուսաւոր լինին, երեկոյեան պարապմունքների մասին էլ թէ՝ «լաւ լուսի տակ պէտք է կատարել»,— բացի այս, ասում եմ, առաջարկում է նա սովորական նստարանների փոփոխութիւնը։ Այս նստարանները ամէն տեղ հանդիպում մի և նոյն շէնքն ունին, ուստի և ամէն տեղ նորոգութեան են կարօտ։ Դոքտորը անյարմար շէնքիցն է, որ երեխաքը հարկադրված են՝ մէջքը ծռելով կամ մատամբ կուրծքին ընկնելով՝ գլուխը այնքան մօտ քաշ անել (կախ) նստարանի գրքակալին կամ գրատախտակին, որպէս զի կարողանան տպագիրը թէ՝ գրչագիրը ջոգել և կարդալ։ Հիմայ տեսէք թէ՝ այս հանգամանքներից ի՞նչ է յառաջ գալի։

—Նախ՝ որովհետև առարկան կամ գիրը մօտիկից զննելու հարկաւորութիւն կայ՝ աչաց բիբերը բնականաբար իրարու պիտի սաստիկ մերձենան, որպէս զի յարմարութիւն պարզագոյն տեսութեան կէտին կամ անկեանը։ այդ շարժումը կատարվում է աչաց պրտաքին միանունքի միջոցաւ, որք իւրեան ամիոտիվելովը (կծկվիլ) սաստիկ ճնշում են աչաց գունաները և այդ կերպ փոքր առ փոքր խանգարում նոցա՝ իւրեանց երկարատև ներգործութիւնովը։ այսինքն՝ երկարացնելով նոցա հորիզոնական առանցքը՝ կարճատեսութիւն են ծնուցանում։

—Երբորդ՝ որովհետև կարդալիս երեխայի գլուխը կախ ուրած ժամանակ նոցա վրայ երակները բաւականին սեղմուած են լինում, հարկաւ արեան դարձը պիտի յամենայ և մեծ ուժով ծաւալի երեսի, գլխի, ուրենի և աչաց մէջ։ Այսկերպ՝ աչքը փոքր առ փոքր արիւնով լցվում է և սորա ճնշելովը աչքի գունաի վրայ՝ նոյն հետևանքը պիտի յառաջ գայ, ինչ որ առաջինք նախընթացում։

—Չորրորդ՝ չէ՞ որ այս արտաքին ճնշումները հաղորդվում են աչքի գնաի միջի հեղանիութիւն. այսկերպ՝ ահա յառաջ է գալի Ներքին ճնշումն աչաց, որոյ ներգործութիւնը ամենից առաւել լինում է աչքագունդի յետի մասի վրայ. որովհետև սա աւելի հեշտ կարող է տարածուիլ և ընդլայնուիլ։ Ուրենի գարձեալ աչքագունդի հորիզոնական առանցքը կը մեծանայ, որև կարճատեսութիւն է(1)։

(1) Այս բացատրութիւնները Ֆիրխովը բերում է զանազան հեղինակներէ համառօտաբար և առանձին առանձին։ Մենք աշխատեցինք բոլորը միացնել անընդհատօրէն եւ մի փոքր ընդարձակելով. կը մնայ մեզ հիմայ այստեղ աւելցնել Պետերբուրգի բժշկական Ակադեմիայի Ուսուցչապետ Խնդէի առաւել զիրքմրանների հայեացքը այս իրողութեանց վրայ։ Մանաւանդ որ այժմս մի քանի բնագէտներ որպէս երեւելի Հէլմհոլց Գերմանացին եւ այլք, շատ կասկածում են թէ, միանունքի ճնշումը կը կարողանայ յառաջ բերել այն հետեւանքը, որոնք վերը յիշում է Ֆիրխովը։

• Պրոֆ. Խնդէն հիմնուելով այն արդէն ապացուցած փաստերի վրայ, թէ աչքը երկու եղանակաւ յարմարուել ֆէրթ հեռու եւ մօտ առարկաները միակերպ տեսնելու. մէկ որ, աչաց բիբերը մեծանում եւ փոքրանում են նայելով առարկայի հեռաւորութեանը, կամ մերձաւորութեանը, երկրորդ որ, աչքի սառնակերպ հիւթը նոյնպէս հեռաւորութեան եւ մերձաւորութեան համեմատ, ընդլայնանալ եւ ամիոտիվել (կամ ուռչել եւ սեղմուիլ) ունի։ Միւս կողմանէ, հիմնուելով իւր մի աշխատակցի փորձերի վրայ,

թէ՝ այս կերպ բայառորութի կարճատեսութեան պատճառները թէ՝ միւս կերպ՝ մեր ընթերցողաց շատերի համար բանը դժուարանում չէ. այլ դիտելու հարկաւոր և կարևորն այն է, որ քանի՛ աղօտ կը լինի լոյսը, քանի՛ մանր են տառերը, քանի՛ մենք կը սովորենք մեր աչքը դրքին շատ մօտացնելու և այդ կերպ՝ կարդալու՝ յիշեալ պատճառները, օրպիսի և լինին սոքա, աւելի սատակիկ և աւելի վնասակար կը ներգործեն: Դեռ զարձեալ թէ՝ աչքին վնասող հանգամանքները՝ շատը յառաջ են գալի մեր այժմեան նատարաններին անյարմար շինվածքից. որով դրքակալը անշարժ է մնում և երեխեքը հարկադրուած են կարդալու համար՝ միշտ մէջքը և գլուխը ծռել՝ աչքերը դրքին մօտացնելով: Դեռ կարդալու ժամանակ երեխէն կարող է կուրծքը մի փոքր ազատ բռնել. բայց գրելու ժամանակ՝ այդ անհարմարելի է, քանի որ նատարանները կամ դրասեղանները անշարժ կը մնան (1): (Շարունակելի)

ատում է, սրտագին խորհրդածութեան ձգտում և սովորական դարձած է այս վերջի ժամանակներս անվերջանց անկանոն խոսքերը: (Բրնակի համար. եթէ երեխէն հարկադրուած է փոքր տառերը միշտ մօտից ջոկելու եւ կարդալու, ինչպէս այդ պատահում է սովորապէս ուսումնարաններում, նա իւր աչաց տառնակերպը միշտ ընդդիմանալով դրութեան մէջ պիտի պահէ, որպէս զի պայծառ տեսութեան յարմարուի. այս գործողութիւնը շատ կը նուազեցնէ եւ կամ չափազանց երկարատեւ կատարուելով, վերջապէս տառնակերպը մի այնպիսի վիճակ կատանայ, որ հեռաւոր շառաւիղները նորանից անցնելիս սամսոիկ պիտի բեկեկուին եւ ցանցաթաղանթի առաջեւ ընկնին: Ուրեմն, հեռաւոր մարմինները տեսնելու անյարմար կը լինի աչքը, որեւ կարճատես:

(1) Վերջին ժամանակներս, Եւրոպայում սկզբնական ուսումնարաններում շարժուն եւ երեխայից կազմութեան յարմար նստարաններ աւելի եւ աւելի մուտ են գտանում: Պետերբուրգում եւս հիմայ սակաւ առ սակաւ տարածվում է: Երանի՜ թէ գրատուներին բարերար անձինք, որ մեր ծխական դպրոցներից մի քանիսը գոնեայ զարդարէին այդպիսի նստարաններով, մինչեւ որ սովորութիւն դառնար եւ բոլոր ուսումնարանաց մէջ մուտ գտնէր:

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՅ

Շարունակութիւն (*)

ՀՈԳԻ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ

Երախտագէտ սրտով նուէր

Ա.

Դատարարակը խօսելով մարդոց այս և այն յատկութեան վերայ, պէտք է դոյս վերայ այն հայեացքն ունենայ, ինչ հայեացք որ իւր գործին ունի այս և այն ցաւի մասին: Մի մեծ բան չէ ասել՝— գլխացաւը մի այնպիսի ցաւ է, որ տանջում է մարդու գլուխը, և մարդն սկսում է փոյ կանչել,—այլ թէ ի՞նչ է պատճառը գլխացաւի, ինչից է յառաջ գալիս և ինչով կարելի է դորա առաջքն առնել կամ բժշկութիւն տալ—ահա այս է հարկաւոր մեզ իմանալ:

Դատարարակներից շատերը կարի ծաղրալի կերպով են մեկնում մարդու այս և այն ոգեկան երևոյթը, և հետևապէս իրանք չհասկանալով, ուրիշներին էլ տգիտութեան մէջ են ձգում: Նրանք հարցանես դրանց թէ ի՞նչ է երկիւղը, իսկոյն կը պատասխանեն, առանց կասմելու. «Երկիւղն է տանջանք հոգեկան և ակնկալութիւն տանջողութեան. կամ լաւ ևս է ասել Երկիւղն է տանջողութեանդ ակնուելն տանջողութեան, կամ, առաւել ճիշդն ասել, երկիւղն է տանջանք առ 'ի տանջելոյ կամ վասն տան-

---

(*) Տես թիւ Ա., Բ և Ե: